դի լեռնաշղթային։ Ղարաբաղում և Զանգեզուրում նախահնդեվրոպական էթնիկ տարրի հայացումը կամ ասիմիլյացիան (հնդեվրոպացումը) կատարվել է Հայկական լեռնաշխարհի այլ մասերից անկախ[25]։

Ընկնելով Որոտան (Բազարչայ) և Հագարու գետերի փակ ավազանը հնդեվրոպական տարրը այդ լճի մեջ հավանականորեն պահպանել է իր նախնական ազգագրական մնացորդային վերապրուկները ավելի երկար, քան Հայկական լեռնաշխարհի այլ մասերում և ինչպես նախորդ դարերում չէր թափանցել այդտեղ ուրարտական թագավորների զենքն և նրա հետ Վանի ավազանում մշակված և Արարատյան դաշտում տարածված ավելի բարձր կուլտուրան, այնպես էլ այնուհետև թե՛ հելլեն-հռոմեական, թե՛ Արշակունյաց և թե՛ Սասանյան ժամանակներում Զանգեզուրը քաղաքական, հասարակական և կուլտուրական տեսակետներով բավականաչափ կտրված էր մնում Արարատյան դաշտում տեղի ունեցող իրադարձություններից։

Զանգեզուրը հեռու էր մնում նաև այնուհետև կատարված ժողովրդական բռնի և կամավոր տեղաշարժերից և տնտեսական խոշոր հեղաշրջումներից։ Մինչև վերջին դարերը՝ գրեթե մինչև ռուսական տիրապետության հաստատվելը, ոչ մի տեղ չի հիշատակվում Զանգեզուրում, ինչպես և Հարևան Ղարաբաղում, որևէ քաղաքի հիմնարկում կամ որևէ առևտրա-արդյունաբերական կենտրոնի առաջացում, բացի Կապան (Ղափան) քաղաքից, որը նայելով իր ավերակների տարածությունից՝ եղել է ավելի շուտ մի ամրոց-ավան։ Նա գրեթե կղզիացած էր մնում մեծ առևտրական ճանապարհներից։ Սրանով է բացատրվում, որ Զանգեզուրի «կուլտուրականացումը» համեմատաբար դանդաղ էր ընթանում և որ Մեսրոպ Մաշտոցի քարոզչության և դպրոցական շինարարության մասին խոսելիս՝ Կորյունը V դարի առաջին կեսին, նկարագրելով իր ուսուցչի գործունեությունը՝ նրա այդ գավառներում հանդիպած դժվարությունները անհրաժեշտ է համարում բացատրել նրանով, որ այդ կողմերի բնակչությունը «առավել գազանամիտ, վայրենագույն, ճիվաղաբարոյ» էր[26]։

ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԵՎ ՌՈՒՍԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Արշակունի թագավորների օրով և հաջորդ մարզպանական շրջանում Սյունիք-Սիսականի այն մասում, որն այժմ կոչվում է Զանգեզուր, հայ տարրը տեղափոխության չի ենթարկվել և նրա առաջացման մեջ մասնակցած առանձին էթնիկ խմբերը պիտի կարողանային վերջնականապես միաձուլվել՝ կորցնելով ամբողջովին իրենց տարբեր ծագման հիշողությունները։ Արաբական տիրապետությունն էլ գրեթե ոչ մի փոփոխություն չմտցրեց նրա ազգագրական բնույթի մեջ։ Ոչ մի տեղեկություն չունենք, որ Սիսականում հաստատված լինեն արաբական գաղութներ։ Այդպիսի գաղութներ երևացին Ճորա պահակի մերձակայքում և Պարտավ քաղաքի շրջանում։ Նրանք բաղկացած էին հիմնականում արաբական ռազմական ուժերից, որոնց վրա դրված էր հատկապես Կասպից

[25] Վերը հիշած իմ հետազոտության մեջ ես ապացուցում եմ, որ Կասպից ղոնով ներխուժած կիմմերների երկրորդ անունը եղել է սակ կամ սակերը կազմել են կիմմերական ազգախմբի կարևորագույն հատվածը, որը իր բազմությամբ անցել է Կուրի ստորին հովտում և առավելապես պատմական Ուտիք նահանգի Շակաշեն կոչված գավառում, այժմյան Կիրովաբադի շրջանում։

[26] Կորյուն, Վարք Մաշտոցի, գլ. ԺԴ։